

մեզանից պահանջել է նաեւ հայկական ամէն տեսակ սերերի կաղապարներ: Եւ խոնարհաբար աղերսում եմ Զեղ, որ կարեաց չափով շուտ պատասխանէք ինձ, թէ արդեօք նա փարո՞ղ է յոյս ունենալ Զեր եղբայրսիրութեան վրայ, որպէսզի մենք նրան կարողանանք պատասխանել:

Յօդուածագիր Սր. Ռիչարդը վերջում իր կարծիքն է յայտնում հետեւեալ խօսքերով. «Մենք չգիտենք թէ ի՞նչ հետեւանք ունեցել է Հայր Բլէզի նամակը... կրօնական պատուիրակութեան ծրագիրը՝ օգնելու Նոր Զուգայի եպիսկոպոսին՝ արդիւնք ունեցա՞ւ թէ ոչ: Այս հարցի պատասխանը մեզ յայտնի չէ»:

Ընդհակառակը, Նոր Զուգայի տպարանի պատմութիւնից տեղեակ ենք, որ այդ նամակից որեւէ օժանդակութիւն չի ստացւում եւ տպագրութեան գործը ամբողջութեամբ կատարւում է հայ հոգեւորականների միջոցով, ինչպէս որ յիշուած է նաեւ տպագրուած գրքերի յիշատակարանների մէջ:

Սր. Ռիչարդը, Նոր Զուգայի տպագրութեան մասին որպէս մատենագրութիւն, յիշում է տողերի գրողի մի յօդուածը յոյս տեսած «Հոնար վէ Մարտում» պարսկերէն թերթին մէջ (Յունիս 1971, թիւ 104, էջ 54), ինչպէս եւ Պետերբուրգում 1874-76 թուերին տպագրուած Բրոսէի Ժողովածուն (BROSSET, Collection d'Historiens Arméniens, I, էջ 464, II, էջ 100):

Ի լուսարանութիւն պէտք է ասել, որ 1972 թուին, Նոր Զուգայի տպարանի մասին տողերս գրողի կողմից յոյս է ընծայուել մի ուսումնասիրութիւն, ուր մանրամասն ձեւով տրուած են 17րդ դարում տպագրուած գրքերի նկարագրութիւնները, միեւնոյն տպարանում մինչեւ այժմ տպագրուած գրքերի լրիւ ցանկը, ինչպէս եւ այն ճիւղերը՝ որոնք տարուել են այդ տպարանի հիմնարկման եւ պահպանութեան համար: Մենագրութեանը խորագիրն է՝ Նոր Զուգայի տպարանն ու իր տպագրած գրքերը 1636-1972:

Լ. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԵՐ - ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ LES LIVRES DU JOUR - RECENSIONS

Ricerca sull'architettura
armena, 22.

GABRIELLA ULUHOGIAN

Silloge delle epigrafi armene di S. Stefano di Giulfa. Centro Studi e Documentazione della Cultura Armena / Milano / Facoltà di Architettura, Politecnico di Milano, Milano, Gennaio 1981, pp. 186 + tavv. XXVI (figg. 185).

Վերջերս՝ 1981 թուի սկիզբներում, Խալիյայի Միլան քաղաքում, լոյս տեսաւ «Հետազոտութիւն Հայկական Ճարտարապետութեան» շարքի թիւ 22 հատորը, որը յատկացուած է Ս. Ստեփանոս Նախավկայի վանքի եւ Դարաշամր գիւղի եկեղեցու մէջ գտնուած խաչքարերին, տապանաքարերին եւ այլ արձանագրութիւններին, աշխատասիրութեամբ Գարրիէլլա Ուլուհոցիանի:

Գիրքը գրուած է խաղերէնով, որը ցաւօք արտի մատչելի չէ մեզ. բայց նկատի ունենալով, որ արձանագրութիւնները բերուած են նոյն՝ հայերէն լեզուով, իսկ յատուկ անունների յիշումը մեզ ասելի է լուսարանում նիւթը, ուստի մասամբ հնարաւոր է լինում ընդհանուր գաղափար կազմել, որով ստորեւ ներկայացնում ենք այն՝ ինչպէս որ մեր հնարաւորութիւնները այդ առթիւ թոյլատրած են:

Գիրքը, որ մեծածաւալ է եւ տպագրուած է օֆսէթ ձեւով, բաղկացած է 212 էջից, որի վերջին 28 էջը փայլուն թղթի վրայ է, ուր տրուել են աւելի քան 170 խաչքարերի, յիշատակարանների եւ տապանաքարերի նկարները:

Գիրքը նուիրուել է հեղինակի ճնողների՝ Լեւոնին եւ Մարիամ Սինանեանի յիշատակին: Կողքի վրայ գրուած է Ս. Ստեփանոս Նախավկայի քարաքանդակի մի պատկերը, վերցուած վանքի շէնքի վրայից: Ինչպէս լաւ կը լինէր որ վանքի ընդհանուր արտաքին տեսարաններից եւս լինէր սկզբում, որը վանքը չտեսնողների համար աւելի խօսուն ու ընկալման միջոց կը լինէր:

Գրքի ներկայացումը (մէկ էջով), գրել է Զանգարույ Բոլոնիէզին, իսկ Նախաբանն ու Ներածականը տւեն 11 էջ (3-13). գրքի բուն նիւթը բռնում է 132 էջ (15-148), որի էջ 127-148ը (20 էջ), չափացուած է Դարաշամր գիւղի եկեղեցուն, գերեզմանաքարերին եւ խաչքարերին:

Գրքում բերուած է 192 արձանագրութիւն, որից 159ը պատկանում են Նախավկայի վանքին, իսկ 160-192ը՝ (33ը) Դարաշամրին:

Խաղաքանչիւր հայերէն արձանագրութիւնների հետ, խաղերէնով տրուած են թարգմանութիւնը եւ այլ կարեւոր լուսարանութիւններ ու աղբիւրներ:

Վերջում վան մատենագիտական, տեղանունների, ժամանակագրական եւ այլ կարեւոր ցանկեր, որոնք գիւրացնում են գրքում ուղղուած անունը գտնելու գործը:

Ինչպէս ասուեց, թէեւ բնագիրը իտալերէն է, բայց աղուհանդերձ շատ բան է հասկանալի: Գրքի Նախաբանում վանքի մասին խօսելուց բացի, հեղինակը յիշում է նաեւ 1977 թուին իրենց տուած այցելութեան մասին, ներկայատուցում է պատմական տուեալներ եւ անդրադառնում անցեալում կատարուած ուսումնասիրութիւններին եւ տպագրուած նիւթերին: Այդտեղ, ինչպէս եւ

գրքի կողքին վրայ, յիշուած է «Ջուղայի Ս. Ստեփանոս»-ը, որ անցեալի համար ճիշտ է՝ երբ Ջուղան գոյութիւն ունէր, իսկ այժմ՝ որ Ջուղան չկայ եւ նոր Ջուղայում եւս կայ Ս. Ստեփանոս եկեղեցի, առաջին պահին մարդ չփոթում է, թէ խօսքը ո՛ր Ջուղայի մասին է։ Ներկայիս Նախավկայի վանքը մաս է կազմում Ասորպատականի նահանգի Մալուի շրջանին։

Ինչպէս յիշեցինք, այս աշխատութիւնը խիստ վարեւոր է պատմական ուսումնասիրութեան տեսակէտից, որը յայն դուռն է բացում նախ Ս. Ստեփանոս վանքով հետաքրքրուողի եւ ապա իրանահայ պատմութեամբ զբաղուողի առջեւ։ Վանքում գտնուող խաչքարերից մէկի, որ տեղադրուած է Առաջնորդարանի սլաքի հիւսիսային պատի մի փոքր դռնակի մէջ, արձանագրութիւնը բերուած չէ այդտեղ, որի բովանդակութիւնն է.

«Այս է Ոչման Տ(Է)րումակամ
Եւ բարեխաւա առ Քրիստոս
Մահադասի Մարտիրոս վարդապետ

Հ. Գ. Ն.՝

(Լ. ՄԻՆԱՍԵԱՆ, Իրամի հայկական վամբիքը, Թեհրան 1971, էջ 25)։

Այս արձանագրութեան թուականը պարզ չլինելով, ինչպէս ըսուած է վերոյիշեալ «Իրանի հայկական վանքերը»

գրքում, անորոշ է մնացել. եթէ դա նուրի առնուէր այս գրքում՝ կարող էր թերեւս որ որեւէ յիշատակում եւ պարզարանում գտնուէր։

Գրքում յիշատակուած խաչքարերից շուրջ տասն հատը պատկանում են ջուղայեցիներին. դրանցից ամենակարեւորը կրում է համար 17ի արձանագրութիւնը, որը վերաբերում է վանքի նորոգման. ըստ այսմ, նորոգման ամբողջ ծախսը շուղայեցի Աղա Շերմաղանն ու սրա փեսաներն են տուել 1827 թուին։ Աղա Շերմաղանն, ըստ բնագրին, բնակուած էր եւ ոչ թէ ծնուել էր Թիֆլիսում։

Նոյն արձանագրութեան վերջում (էջ 31), 29րդ տողի բաց թողնուած բառը, պէտք է լինի «յամցամաց», որը գրուած է մեր «Իրանի հայկական վանքերը» մենագրութիւնում բերուած արձանագրութեան մէջ (էջ 34)։

Գրքում տեղ գտած եւ, ընդհանրապէս, խաչքարերի ու արձանագրութիւնների նկարները վերցուել են հանգուցեալ Ժողէս Ոսկանեանի եւ Հայկ Ուլուհոնեանի (№ 108, 109, 113, 116 եւ 117) կողմից։

Գնահատանքի արժանի են Գարեթէլա Ուլուհոնեանի ճիշդն ու բժախնդիր աշխատանքը, ի խնդիր մեր մշակոյթի պատմական զանգեւորի հանրութեան ներկայացուելուն եւ պահպանման։

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Գրքից

Ա. Գ. ԱՐԱՆՆԱՄԵԱՆ

Երեւան, 1978։

Ինչպէս իւրաքանչիւր ազգի լեզու, լինի դա գրականութեան մէջ մտած, կամ դեռեւս անգիր մնացած, իր գրաւոր ու բանաւոր, պարզ ու սովորական խօսակցական լեզուից բացի, իր մէջ ունի նաեւ խօսակցական ու գրական տարբեր ձեւեր, որոնց հասկանալը կամ կար-

գալը, սովորական խօսող ու կարդացող ժողովրդի համար դժուար է ու անհասկանալի։

Ասենք օրինակ՝ հայերէնը. բացի գրարար ու աշխարհարար, արեւելահայ ու արեւմտահայ եւ բարբառային խօսակցական ձեւերից, իւրաքանչիւր շրջանում կամ քաղաքում ու գիւղում եղել են եւ կան նաեւ զաղտնախօսակցական լեզուներ, որոնց հասկանալը օտարի համար դժուար ու անհասկանալի է։ Շատերը, մի ուրիշի ներկայութեան, ընկերին կամ տնեցուն իրենց միտքը յայտ-

ներ են այդ զաղտնալեզուով, որպէսզի ներկայ եղող օտարը չհասկանայ*։

Ճիշտ այդպէս էլ, բանաւորից բացի, գործ են ածուել զանազան տեսակի գրաւոր ծածկագրեր, վրձնագրեր, փակագրեր, զաղտնագրեր, որոնք ցրուած են յատկապէս մեր գրչագրերի մէջ։

Պրոֆ. Աշոտ Աբրահամեանը երկար տարիներ ուսումնասիրել եւ զանազան յօդուածներով անդրադարձել է հայերէն գրաւոր ծածկագրութիւններին եւ տրուել անհրաժեշտ լուսաբանութիւնները. իսկ 1978 թուին, Երեւանի համալսարանի Հրատարակութեամբ, լոյս է տեսել նրա «Հայկական ծածկագրութիւն» խիստ շահեկան հատորը։

Ծածկագրութեան մասին եղել են այլ յօդուածագիրներ եւս, որոնցից յիշենք բանասէր Արա Մելքոնեանին, որ մի քանի տարի առաջ մի շահեկան յօդուած տուեց, «Իրազարկ տարեգիրք»ի մէջ (Գ. տարի, 1969, էջ 166-181). իսկ Պրոֆ. Աբրահամեանը այդ առթիւ էր գրի առած մի շարք յօդուածներից բացի, «Հայոց գիր եւ գրչութիւն» աշխատութեան մէկ գլուխը (Երեւան, 1973, ԳԱՄ, XIV, էջ 244-279) յատկացրել է ծածկագրութեան, իսկ նախքան այդ փել, աւելի հանգամանօրէն խօսել է իր «Հայ գիր եւ գրչութեան պատմութիւն» աշխատութեան մէջ (Երեւան 1959, էջ 186-242)։

«Հայկական ծածկագրութիւն»ը երկար տարիներ ուսումնասիրութեան ու բանասիրութեան արդիւնք է։ Գրքի առաջաբանում ասուած է որ ծածկագրութեանց բազմաթիւ բնագրերը հրատարակուած են գրեթէ բոլոր «Ջեռագրաց ցուցակ»ների մէջ, ինչպէս Երեւանի մէջ, Վենետիկի, Բրիտանական թանգարանի, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի եւ

այլն։ Ապա յիշատակուած են մի շարք հնդկականներ, որոնք յօդուածներ են հրատարակել ծածկագրութեանց մասին կամ օգտուել են իրենց աշխատութիւնների մէջ, գեղեցիկ մէջբերումներ անելով։ Այստեղ միջանկեալ յիշեմ որ հայկական գրեթէ բոլոր «Ջեռագրաց ցուցակ»ները, աննշան բացառութեամբ, ունենք ձեռքի տակ, ուսկից դեռ անցեալում մեծ թուով հաւաքել էինք այդ ծածկագրութիւնները։

Գրքում նախաբանից յետոյ գալիս է ծածկագրութեան մասին բուն ուսումնասիրութիւնը, որ սկսուած է 11ից եւ շարունակուած՝ մինչեւ էջ 296։ Ապա տրուած են ծածկագրութեան մի մասի «բանալիներ», «Համառոտագրութիւններ» եւ «Անձնանուններ» ու «Առարկայական» ցանկեր։

Գրքի հնդկական ուսումնասիրութեան նախ է դարձրել 38 տեսակ ծածկագրութիւն, որոնցից իւրաքանչիւրի մասին նախ տրուել են մի շարք օրինակներ, ապա բերուել են մի շարք ծածկագրեր՝ եւ վերծանումով։ Այն ծածկագրերը՝ որոնք վերծանուած չեն եղել «Ջեռագրաց ցուցակ»ներում կամ գրչագրերում՝ վերծանուել են հնդկական փոփոխութիւններով։ Գրքում բերուած ստանդարտութիւնները։ Գրքում բերուած ստանդարտութիւններից աւելի շուրջ 400 վերծանուել են իրեն փոփոխութիւններով։ Գրքի մէջ խօսուել է հետեւեալ ծածկագրերի մասին, ինչպէս՝ փոխանակական գրեր, գոմարագիր, անգրագիր, կէզիր, օղակագիր, փառագիր, ճիւղատագիր, օրհնագիր, զարդագիր, փոստագիր, անդժուածագիր, մայրանուն եւ այլն։

Այստեղ բերենք մի քանի օրինակ.

1. Փոխարինագիր կոչուած են այն ծածկագրերը, որոնց մէջ վերցնուած են այդպիսի տառերը իրենց փոխարինել են թէքով եւ միաւորներին փոխարինել են համաւորները, առանաւորներին՝ հարիւրաւորները, հարիւրաւորներին՝ հարիւրաւորները եւ կամ նման այլ ձեւագրաւորները եւ կամ նման այլ ձեւերով։ Օրինակ 2 (700), 1 (1000), 1 (30) բով։ Օրինակ 2 (700), 1 (1000), 1 (30)

* Օրինակ, խօսում են բառերի վանկերն անջատելով եւ նրանց իւրաքանչիւրի առջեւ մի առաւ աւելացնելով, կամ տառերը ասում են զատ զատ եւ իրենց հնչիւններով, վանկերը ետ եւ առաջ աւելցնելով, վանկերը ետ եւ առաջ աւելցնելով, վանկերը ետ եւ առաջ աւելցնելով եւ այլն։